

նայ առարկայ ըլլալու, որովհետև որչափ մասնաւոր հաս-
տատութիւն մը, այնու ամենայնիւ անոր աչազուրկ անօրէնը
ոչ միայն զայն շահադիտական ձեռնարկ մը չէ դարձուցած,
այլև անօրինակ անձնազոհութեամբ վրայ տուած է մինչև
անգամ իր հայրենի տունը և նոյն իսկ իր առողջութիւնը:

Բազմարդիւն կրթարանի մը այս տաղնապալի կացու-
թիւնը ներկայացնելով համայն հայ ժողովրդեան ուշադրու-
թեան, լիայոյս կոչ կընենք անոր ամեն դասակարգերու հայ-
րենասիրական զգացումներուն, կոչ կընենք հարուստին, վա-
ճառականին ու արհեստաւորին, հայրենակիցներուն և օտա-
րաքնակներուն, որպէս զի փութան օգնութեան հասնիլ սոյն
վարժարանին, որու սպառնացող վտանգը աղէտ մը պիտի
ըլլայ Վասպուրականի համար*:

Առաջնորդական տեղապահ Վանայ

Յովսէփ Եպիսկոպոս,

Վան, 22 Ապրիլ, 1913.

(Կնիք.)

Տարեկան տեղեկագիր Երամեան Վարժարանի.

Շրջան ԼԵ. (1912 Օգոստոս—1913 Օգոստոս)

Սոյն շրջանի սկիզբը ունէինք 343 աշակերտ, իսկ վերջը
366. 195 աշակերտ ուսումնարանի 7 և 172 նախակրթարանի
4 դասարաններու մէջ: Թուշակաւոր աշակերտներու թիւը 304
էր, ձրիավարժներուն՝ 59 և 3-ը բարեյիշատակ Պոպովի սա-
ները:

Մնայուն ուսուցչաց թիւը 15, երթեկներուն՝ 4: Դա-
սարան չը փոխողներու թիւը 25: Ամբողջ դասարաններու մէջ
աւանդուած դասերուն տարեկան գումարը 12007: Ուսուցչ-
ժողովներու թիւը 37. փորձնական դաս 7. բարձրագոյն կար-
գերու համար բանախօսութիւններ՝ 17:

Ընդունած ենք հետևեալ նուէրները (գրական.) Թան և
Մարեկ՝ Պօլսոյ Ալիանս Ֆրանսէզի մասնաճիւղէն: Ճերիդի Շար-
գիե և Միուքիւն՝ Հ. Բ. Ը. Միութենէն: Ազգ թերթը՝ պատ-
խմբադրութենէն: Մօակ, Մօակի 40 ամեայ յօբելեան, և Մօակ
ու հայ կիկ՝ տեար Մանուկ Նալբանդեանէ՝ Արմենիա՝ տեար Խա-
չատուր Ասլանեանէ, Տահար և Տահար Մանկանց՝ տեար Սիմէօն

* (Տես Վանի «Աշխատանք»ի 1913 տարւոյ Մայիս 4-ի թուի մէջ՝
№ 25—124):

Իսաղանձեանէ, Ուսումնարան՝ տեար Ա. Տ. Պօղոսեանէ, Երկուց՝ տեար Զաւէն Կորկոտեանէ, Տարեցոյց մը՝ (1913-ի) տեար Ստեփան Մրդիկեանէ, Մայրենի աշխարհ և Լեյլի Մեջրում՝ տեար Տ. Զիթունիէ, 3 հատ ռուսերէն գիրք՝ տեար Մարգար Տ. Յարութիւնեանէ, 1 պատի օրացոյց և գործ. քերականութիւն մը՝ տեար Յովհաննէս Բիւզանդեանէ, 1 Սրբղ. պատմութիւն՝ տեար Խոսրով Խոստիկեանէ, 2 հատ ֆրանսերէն գիրք՝ տեար Խոսրով Զիթունիէ, Խալաթեանցի Ռուս. Հայոց պատմ.՝ մեծ. Պր. Օլֆերիէվէ, Ներվանդագէի Երկերու ժողովածոյ՝ Օր. Ս. Նարլեանէ, 1 է Փօէթ ՂԱ.Ռ.մէնիէն՝ Զերադի, Օր. Հ. Ներսէսեանէ: Իսրայիլու ելեմտից հաշուեկշիւը հետևեալն է:

Մ Ո Ւ Տ Ք.

դՈՒՐՈՒՇ, փԱՐՄԱյ,

Աշակերտաց տարեթոշակները,	59330	20
Երկրորդ անգամ արուած վկայականներէն,	657	20
Պսպովի երեք սաներու թոշակը,	648	—
Մէարիֆէն (կրթ. տեսչութիւն) Թուրքերէնի ուսուցման համար,	2351	20
Սրահի վարձքը, ներկայացումներու առթիւ,	2377	—
Տարեկան և Կաղանդի հանդէսներու մուտքը,	1026	—
Աշակերտաց մուտքի տուրքերը,	1810	—
Ծախուած գիրք և դոյք,	146	—
Տ. և Տիկին Փիրումեանէ, փոխան ծաղկեպսակի,	324	—
Պր. Իշխան Միքայէլեանէ	216	—
Ռուս հիւպատոս պր. Սքլիմովիչէ, Բառարաններ գնելու աշակերտաց համար,	540	—
Տեար Յովհաննէս Անթոյեանէ՝ փոխան ծաղկեպսակի	108	—
» Մարտիրոս Աթթարեանէ՝ (Տիգրանակերտցի)	54	—
Պօլսոյ Ալիանս Ֆրանսէզի մասնաճիւղէն	2160	—
» » » կողմէ Վանի վարժապետանոցէն Ֆրանսերէնի ուսուցման համար	1944	—
Տեար Գ. Յովնանեանի ձեռամբ հանգանակուած ի Մարտելիա	580	—
Ս. Պետրպուրկի Հայոց Եկեղ. Խորհուրդէն	12464	—
Կովկասէն՝ պր. Երուանդ Լալայեանցի ձեռամբ	10800	—
Վսեմ Ոսկան էֆ. Մարտիկեանի նախաձեռնութեամբ հանգանակուած դպրոցիս համար գաշնակ մը գնելու	1832	—
ԳՈՒՄԱՐՐԸ՝		99368 20

Ե Լ Ք	ՊՈՒՐՈՇ ՎՈՐԱՅ
Նախորդ երեք շրջաններու բացը,	13656 —
Պաշտօնէութեան վարձքը,	90385 —
Գրական պիտոյք, գիրք, լրագիր, փօստ,	1591 30
Ընդունելութեանց և ուսուցչ. ժողովն. ծախքը,	616 20
Նորոգութիւն, գրասեղան և դռներու ու պատուհաններու ներկը,	7857 20
Բնագիտական գործիք և անոնց դարակներ,	4780 10
Վառելիք և վառարան,	3434 —
Տոկոս,	1254 20
Գպրոցիս բարերար տեար Պետրոս Կարապետեանի ծնողաց հոգեհանգիստ և զանազանք,	871 —
Գումարը՝	124447 —
Որմէ հանելով մուտքի գումարը՝	99368 20
35-րդ շրջանի բացը կը լինէր	25078 20

Շնորհակալութեամբ կը յայտնենք որ տեար Պաղտատար Մելքոնեան նուիրած է ելեքարական գործիք մը, (Ռուսքօրֆի Կարժառ), նաև Թիֆլիզի թերթերը կը ծանուցանեն որ ի նպաստ գպրոցիս նուիրած են 1000-ական ըուբլի տեարք՝ պր. Ալէքսանդր Մէլիք Ազարեան և կրթասէր ոմն՝ ձեռամբ պր. Համբարձում Առաքելեանի: Եթէ սոյն նուիրատուութիւնները մեր ձեռքը հասած լինէին այս տարուայ հաշուեկշռի հարցը գոցուած պիտի լինէր: Առ այս կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնը վերոյիշեալ մեծայարգ կրթասէր բարերարներուն:

Նաև Ամերիկայի «Ասպարէզ» թերթէն կիմանանք որ յարգելի Տ. և Տիկին տօքթ. Արծրունիներ. Ֆրէդնոյի մէջ հանդանակութեան մը ձեռնարկած են ի նպաստ գպրոցիս: Մեր խորին շնորհակալութիւն կը յայտնենք նաև յիշեալներուն:

Նոյնպէս խորին շնորհակալութեամբ կը ծանուցանենք որ նահանգիս կուսակալ վսեմ. Թահսին պէյ կրթական: նախարարութեան կողմանէ վաղուց արդէն, գպրոցիս տնօրէնի խոստացուած պատուանշանը այս շրջանին բերել տուաւ և ներկայ ամսոյս 18-ին մեր տարեկան հանգէսին մէջ քաջալերական քանախօսութեամբ մը 100 լիրայի նպաստ մը խոստացաւ և 10 լիրայ նուիրեց իր անձնականէն ի նպաստ դաշնակի, փափաքելով որ հանդանակութիւնը շարունակուելով ոչ միայն

գաշնակ մը գնուի գարոցիս համար՝ այլ և սրահի առաստաղը
շինուի: Իր այս առաջարկութիւններ հանդիսականներէն ծա-
փերով ընդունուեցան, և մասնաժողով մը իսկոյն գործի ձեռ-
նարկեց:

Գարոցիս 36-րդ շրջանը սկսաւ ամսոյս 18-ին բացման
հանգէսով մը: Գարոցս կունենայ այս շրջանում նաև Եօթնա-
մեայ Խտատիի վերջին դասարանը, ուր օրէնսգիտութեան և
քաղաքական տնտեսութեան դասերը ստանձնած է անձնուի-
րաբար նահանգիս ընդհ. դատախազ Ա. զնուաշուր Մատթէոս
էֆ. Էպլիզաթեան:


Վերջացող շրջանին վարժարանիս գտած քաջալերական
ընդունելութիւնը, նուէրները և խոստումները մեզ յոյս կը
ներշնչեն որ հաստատութիւնս վերջապէս իր նիւթականն ա-
պահովուած պիտի տեսնէ շնորհիւ կրթասէր ազգացնոց օժան-
դակութեան*:

Հիմնադիր—Տնօրէն Երամեան Վարժարանի՝

Հ. Երամեան

1913, Օգոստոս 21.

Վան.



* (Տես «Աշխատանք»-ի 1915 տարւոյ 24 Օգոստոսի թիւ № 41—
457):